

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԴԵՐՈ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս.Ս.

Ընդհանրապես ցանկացած երկրի արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից է հնարավորինս խորությամբ և համակողմանիորեն ճանաչել միջազգային հարաբերությունների զարգացման դիալեկտիկական և փոփոխելի էթե ոչ ճշգրիտ, ապա գոնե մոտավոր կամ էլ ընդհանուր պատկերացում կազմել այն գլխավոր միտումների և ուղղությունների մասին, որոնք առկա են այդ հարաբերությունների զարգացման այս կամ այն փուլում: Արտաքին քաղաքականության բնագավառի վերաբերյալ կանխատեսումները ճիշտ հիմքերի վրա դնելու համար հարկավոր է առանձնացնել հետևյալ չորս հիմնական գործառույթները.

ա) կանխատեսում, որը գաղափարախոսական ուղղվածություն ունի և ազդում է հատկապես նեղ շրջանակի մասնագետների՝ քաղաքագետների, դիվանագետների, զինվորականների ապագայի վերաբերյալ քաղաքականֆիլիսոփայական հայացքների, պատկերացումների ձևավորման վրա,

բ) կանխատեսում, որն ունի առավել լայն քարոզչական նշանակություն և նպատակաուղղված է հասարակության կամ էլ այս կամ այն սոցիալական խավի, շերտի, խմբի մտածելակերպի, հոգեբանության վրա ներգործելուն՝ հետապնդելով այս կամ այն բնագավառում իրերի վիճակը շտկելու նպատակ,

գ) կանխատեսում, որը նպաստում է միջազգային հարաբերությունների տեսության զարգացմանը և այդ հարաբերությունների մասին տարբեր հիպոթեզների, հայեցակարգերի մշակմանն ու դրանց հավաստիության ստուգմանը,

դ) կանխատեսում, որի արդյունքները կարևորագույն տարր են՝ արտաքին քաղաքական և ռազմական բնույթի ծրագրավորումների ու պլանավորումների համար:

Ըստ էության, նման կանխատեսումները, ինչպես ընդունված է ասել պետական-քաղաքական շրջանակներում, ծառայում են ընդունվելիք քաղաքական որոշումների, վճիռների ու ռեսուրսների արդյունավետ «բաշխման» ռազմավարական գաղափարներին: Ընդ որում, գոյություն չունեն ինչ-ինչ կարգի սահմանափակումներ այն առումով, թե այս կամ այն գիտնականը պիտի զբաղվի կանխատեսման համար առանձնացված մեկ գործառույթի մշակման կամ իրականացման խնդրով: Օրինակ, հետազոտողն իր ուսումնասիրության օբյեկտ կարող է դարձնել միանգամից կանխատեսման մի քանի գործառույթ: Հարկ է նշել, որ արտաքին-քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող գիտնականների շրջանում առավել տարածված է հատկապես կանխատեսումների «ա» և «բ» գործառույթների համատեղումը կամ համադրումը (նման հեղինակների թվին կարելի է

դասել Ջ. Բժեզինսկուն, Դ. Բելին և այլոց)՝ Հետաքրքրականն այն է, որ կանխատեսման «ա» և «բ» գործառնությունների համատեղմանը նվիրված ուսումնասիրությունները խիստ սահմանափակ են: Մույն հանգամանքը կարելի է բացատրել ոչ միայն այն իրողությամբ, որ համեմատաբար երիտասարդ է միջազգային հարաբերությունների կանխատեսումներով զբաղվող բնագավառը՝ քաղաքական ապագայաբանությունը, այլև նրանով, որ նմանաբնույթ հետազոտությունները հիմնականում ներառում են արտաքին-քաղաքական և ռազմական պլանավորման ու ծրագրավորման առանցքային խնդիրները: Ավելին, այդպիսի կանխատեսումները, օրինակ՝ ԱՄՆ-ում, հանդիսանում են գաղտնի փաստաթղթեր և օգտագործվում են բացառապես ծառայողական (ռազմաքաղաքական) նպատակներով: Իսկ եթե այդ ամենին էլ ավելացնենք նաև այն հանգամանքը, որ հենց այդպիսի հետազոտությունների հիմքի վրա է մշակվում Արևմուտքի զարգացած պետությունների ռազմաքաղաքական (պետական անվտանգության) հայեցակարգը, թերևս պարզ կդառնա, թե որքան է կարևորվում կանխատեսումների դերն ու նշանակությունը արտաքին քաղաքականության բնագավառում: Քննելով քաղաքական կանխատեսումների դերն ու նշանակությունը և քննադատելով ռուսական ներկայիս քաղաքական էլիտային՝ ռուս հայտնի գիտնական, քաղաքագիտական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետ Ս. Ս. Կակոշինը գրում է. «...ցավոք, ներկայիս պրակտիկների ընդամենը ոչ մեծ մասն է ընդունակ մտածելու՝ դիմելով ապագային, պլանավորել ապագան, այսինքն՝ օժտված է ռազմավարական մտածողությամբ, և միշտ չէ, որ փորձում են դուրս գալ առօրեականության շրջանակներից»¹:

Արևմտյան հետազոտողների մի մասը գտնում է, որ հատկապես ռազմաքաղաքական պլանում ընդհանրացված տեսքով կանխատեսումների օգնությամբ կարևորվում է երկու գործոն, որոնցից մեկը՝ հակառակորդի (և ոչ միայն հակառակորդի) առկա հնարավորությունների մասին հստակ և ամբողջական պատկերացումներ կազմելն է, մյուսը՝ նրա հետապնդած նպատակների (ձգտումների) ճշգրտումներն են: Որպես կանոն, այս կամ այն երկրի հնարավորությունների ճշգրտման ժամկետներն ընդգրկում են մոտավորապես հինգից մինչև յոթ տարի: Սովորաբար որևէ երկրի (երկրի մեծ կամ փոքր լինելու հետ կապված՝ պահանջները, հասկանալի է, միմյանցից տարբերվում են) հնարավորությունների ճշգրտում ասելով՝ նկատի է առնվում հետևյալ գործոնների հաշվառումը.

ա) նյութական առկա ռեսուրսներ,

բ) տնտեսական ներուժ,

գ) գիտատեխնիկական զարգացման մակարդակ (որը կարող է օգտագործվել ռազմական շինարարության համար և ծառայեցվել ակտիվ արտաքին-քաղաքական գործունեություն ծավալելու նպատակին):

¹ **Какошин А. А.** Стратегическое управление: теория, исторический опыт, сравнительный анализ, задачи России, М., 2003, с. 62.

Ըստ արևմտյան քաղաքագետ-ապագայաբանների, եթե այս կամ այն երկրին վերաբերող կանխատեսումների արդյունքները մոտ են իրականությանը, ապա սուբյեկտ պետության (կամ պետությունների) նպատակների (ձգտումների) ճշգրտումները դառնում են ժամանակի խնդիր: Հնարավորությունների ճշգրտման առաջնայնության խնդիրը լուծելուց հետո (եթե հիմնականում հաջողվել է իմանալ հակառակորդի իրական հնարավորությունների մասին) ժամանակավորապես երկրորդ պլան է մղվում հակառակորդ երկրի հետապնդած որոշակի նպատակների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Որոշ ժամանակ անց արդեն կարևորվում է նաև հակառակորդի նպատակների ճշգրտման խնդիրը: Այսպիսով, հետազոտության նպատակի հաջողության ապահովման և օբյեկտի գուտ գիտական-ճանաչողական տեսանկյունից վերը նշված երկու գործոնների մասին ամբողջական պատկերացումները և կանխատեսումը հավաստի դարձնող տվյալներ ունենալու անհրաժեշտությունը կասկած չի կարող հարուցել: Եթե նախապես ճանաչում ես հակառակորդիդ և հստակ պատկերացումներ ունես քո առկա հնարավորությունների և անելիքների մասին, ապա կան ճանաչողական այլ խնդիրներ ևս, որոնց վերաբերյալ դեռևս մ. թ. ա. VI դարում բանաձևել է չինացի խոշոր ռազմավար (ստրատեգ) Սուն-Ցզին, որի «Պատերազմի արվեստը» աշխատությունը չի կորցրել իր արդիականությունը նաև XXI դարում: Սուն-Ցզին գրում է. «Եթե գիտես քեզ և գիտես թշնամուդ, ապա կռվիր, թեկուզ, հարյուր անգամ, անվտանգ կլինես և միշտ կհաղթես: Եթե գիտես քեզ, բայց չգիտես թշնամուդ, ապա դու կունենաս և հաղթանակներ, և պարտություններ: Եթե չգիտես քեզ և չգիտես թշնամուդ, ապա քո յուրաքանչյուր ճակատամարտ կավարտվի պարտությամբ²: Ընդհատ է, Սուն-Ցզինի խոսքը վերաբերում է ռազմական բնագավառին, բայց եթե նման սկզբունքով ձևակերպվեն պահանջները նաև քաղաքականության, իսկ ավելի որոշակի՝ արտաքին քաղաքականության ոլորտի համար, ապա նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունքների ստացման պարագայում գրեթե էական տարբերություն չկա: Չէ՞ որ, վերջին հաշիվով, պատերազմը քաղաքականության շարունակությունն է, բայց այլ միջոցների օգնությամբ (Կ. ֆոն Կլաուզեֆց): Երկու գործոններին առնչվող ամբողջական տվյալների համադրման և հետազոտության օբյեկտի նկատմամբ համակարգային մոտեցում ցուցաբերելու պարագայում ծագում է միջազգային հարաբերությունների «անատոմիական» կառուցվածքը ճանաչելու և արժևորելու խնդիրը՝ ըստ առաջնահերթությունների.

- 1) միջազգային հարաբերությունների համակարգային գործառնության կառուցվածքային վերլուծություն,
- 2) միջազգային հարաբերությունների համակարգում ընթացող քաղաքական-դիվանագիտական գործընթացների վերլուծություն,

² Сунь-Цзы. Искусство войны, М., 1958, с. 21.

- 3) միջազգային հարաբերությունների համակարգում ընթացող փոխակերպման գործընթացների վերլուծություն,
- 4) կոնկրետ որևէ երկրին, գործող կամ ձևավորված ռազմաքաղաքական բռնկներին, դաշինքներին վերաբերող տվյալների վերլուծություն,
- 5) առանձին երկրներում ընթացող գործընթացների և ստեղծված կառուցվածքների համակարգային վերլուծություն,
- 6) միջազգային հաղորդակցության ուղիների ընձեռած հնարավորությունների քաղաքական հետևանքների վերլուծություն,
- 7) միջազգային հարաբերություններում պետությունների վարքաբանական դերի հետազոտում:

Ամենալայն իմաստով, թերևս, վերը նշված առանցքային ուղղությունները կարելի է համարել ներկայումս միջազգային հարաբերությունների գործառնան «ռոնաշարը»՝ այն առումով, որ այդ յոթ ուղղությունների վերաբերյալ կատարված գիտական համակողմանի վերլուծություններն ու հաշվարկները ի վիճակի են հիմնականում ապահովելու այս կամ այն պետության կողմից արտաքին քաղաքականության բնագավառում կատարվող հիմնավոր քայլերը համաշխարհային քաղաքականության մեջ: Արևմուտքում միջազգային հարաբերությունների հիմնական ուղղություններին (որևէ կոնկրետ բնագավառի) վերաբերող գիտական կանխատեսումների համար ընդունված ժամանակային միջակայքերի սահմաններն ունեն հետևյալ պատկերը. կարճաժամկետ՝ մի քանի ամսից մինչև հինգ տարի, միջնաժամկետ՝ 15 և ավելի տարիների ժամանակահատվածներով: Գլոբալ գործընթացների այգորիթմը իմանալով, որոնք ընթանում են մարդկության «հանրակացարանում», կարելի է հասկանալ մեր աչքի առաջ տեղի ունեցող իրադարձությունների իսկական իմաստը արդեն այսօր, իսկ դա նշանակում է՝ մշակել վարքագծին համարժեք ուղի «ոչ թե ներկայի», այլ ուրվագծվող հեռանկարի համար: Առավել ևս, ի հայտ է գալիս հնարավորություն կատարելու մեծ հավանականություն ունեցող կանխատեսումներ՝ համապատասխանաբար, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարների համար, այսինքն՝ մինչև ակնհայտ չափով գիտակցաբար արարելով սեփական ճակատագիրը: Կանխատեսումների դերը շատ դիպուկ է բնութագրել ռուս քաղաքագետ, աշխարհաքաղաքականության հարցերով զբաղվող հայտնի մասնագետ Կ. Է. Սորոկինը³:

Արտաքին քաղաքականության շրջանակներում միջազգային հարաբերություններին վերաբերող կանխատեսումների համար արդի փուլում առավել տարածված է կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակային միջակայքերի ուսումնասիրությունն այն պատճառով, որ ներկա դարաշրջանի պահանջները օբյեկտիվորեն հիմնավորում են նման մոտեցումների ռազմաքաղաքական և տնտեսական նպատակահարմարությունը: Սույն տեսանկյունից էլ միջազգային

³ Сорокин К. Э. Геополитика современности и геостратегия России, М., 1996, с. 3.

հարաբերություններին վերաբերող կանխատեսումները մշակվում են՝ հաշվի առնելով երկու էական հանգամանք՝

ա) քաղաքական գործիչների, պետության առաջնորդների ընդունած որոշումների, վճիռներին հաջորդած գործողությունների հնարավոր հետևանքների ներգործության աստիճանը միջազգային կամ տարածաշրջանային քաղաքականության զարգացումների վրա և

բ) քաղաքական գործընթացներ, որոնք կարճաժամկետ և երկարաժամկետ միջակայքերում ի գործ են լրջորեն ազդելու այս կամ այն երկրներում (տարածաշրջանում) ընթացող իրադարձությունների վրա (այդպիսի գործընթացներից են մակրոտնտեսական փոփոխությունները, ազգային համախառն արդյունքի դինամիկ աճը և այլն): Նկատենք նաև, որ միջազգային հարաբերությունների զարգացման («ա» և «բ») գործընթացներին առնչվող կանխատեսումներին համապատասխանում են կարճաժամկետ (մինչև 5 տարի) և միջնաժամկետ մինչև (15 և ավելի տարի) միջակայքերը: Բնարկե, կան նաև առանձին տեսակետներ, որոնք վերը ներկայացված գիտնականների մեծամասնության ընդունած կանխատեսումների միջակայքերից տարբերվում են: Օրինակ, Ա. Ֆրիդլենդերը պնդում է, որ կանխատեսման կարճաժամկետ միջակայքի սահմանները հարկավոր է «սեղմել» մինչև երկու տարի, իսկ երկարաժամկետինը՝ մինչև տասը տարի: Եվ՝ հակառակը: Մեկ այլ գիտնական էլ (Ռ. Յանգը) գտնում է, որ հարկավոր է կարճաժամկետ կանխատեսումների սահմանները «երկարաձգել» մինչև 45 տարի և ավելի շատ ուշադրություն դարձնել միջնաժամկետ կանխատեսումներին՝ ընդգրկելով մինչև 10 տարի ժամանակահատված, քանի որ վերջինս ներառում է և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ կանխատեսումների ժամանակային միջակայքերը և այլն: Հայտնի է, որ վերջին 1020 տարիներին հեղինակավոր կազմակերպությունների (օրինակ՝ NICE-ի, Համաշխարհային բանկի, այդ նույն JOE-ի և այլն) հրապարակած կանխատեսումները որոշակիորեն ազդում են տարբեր երկրների կառավարությունների որոշումների ընդունման մեխանիզմի վրա: Բնականաբար, խոշոր աշխարհաքաղաքական դերակատարները որոշակի ջանքեր են գործադրում իրենց համար դրական սցենարներն իրագործելու և բացասականները կանխելու համար: «Հեղինակավոր կանխատեսումները» կարելի է նաև մեկնաբանել որպես ինքնատիպ տեղեկատվահոգեբանական գործողություններ՝ միտված միջազգային հանրությունում որոշակի տրամադրությունների ձևավորմանը: Դրանով իսկ այդ կանխատեսումները կարծես համաշխարհային և ազգային հանրությունների գիտակցության տարր են դառնում՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Ընդհանուր առմամբ, այս բոլոր հանգամանքները անդրադառնում են ընթացիկ գործընթացների վրա, այս կամ այն չափով ուղղորդում են դրանք, դրանով իսկ որոշակի չափով ապագայի հիմքերն են դնում արված կանխատեսումներին համապատասխան: Այսպիսով, հաստատվում է հետադարձ դրական կապ ներկայի և ապագայի միջև, այսինքն՝ հնարավոր ապագայի մասին զարգացած պատկերացումները նպաստում են այս կամ այն ոլորտում կոռեկտ քա-

դաքսականություն վարելուն արդեն այսօր: Վերջին հանգամանքը չափազանց արդիական է Հայաստանի համար, որը քաղաքակրթությունների հանգուցակետում է, անկայուն տարածաշրջանում, և հայության համար, որի մի մասը ցրված է ամենատարբեր մշակութային քաղաքական համակարգեր ու հավակնություններ ունեցող երկրներում: Ակնհայտ է, որ նման պայմաններում համարժեք ազգային քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ են պատկերացումներ ինչպես սեփական երկրի և նրա հարևանների ապագայի, այնպես էլ գլոբալ քաղաքական դերակատարների զարգացման հեռանկարների մասին: Այնինչ «դե ֆակտո» պատերազմի վիճակի մեջ գտնվող երկիր լինելով՝ մենք չունենք հստակ պատկերացումներ, օրինակ, Ադրբեջանի, նրա հասարակության ու տնտեսության և, առավել նս, այդ երկրում ածխաջրածնային բուժի անխուսափելի ավարտից հետո սպասվող հնարավոր զարգացումների մասին: Իրավիճակը գրեթե նույնն է նաև տարածաշրջանային այլ երկրների հետ կապված:

Միանգամայն հասկանալի պատճառներով հայկական վերլուծաբանական հանրության հիմնական ռեսուրսներն ավելի շատ զբաղված են կոնկրետ տարածաշրջանային գործընթացներով: Մակայն առանց գլոբալ աշխարհաքաղաքական դերակատարների զարգացման հիմնական միտումների իմացության խիստ դժվար կլինի մշակել կոռեկտ տարածաշրջանային քաղաքականություն նույնիսկ իրավիճակային մակարդակով: Այս ամենը թելադրում է այնպիսի ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն, որոնց խնդիրը կլինի գլոբալ միտումներին հետևելը, և՛ Հայաստանի, և՛ հայության անվտանգության համատեքստում սցենարներ մշակելը: Ակնհայտ է նաև, որ նման խնդրի լուծումը հնարավոր է միայն հայության մտավոր ռեսուրսների առավելագույն համախմբման միջոցով⁴: Դժվար է չհամաձայնել այս կարծիքի հետ:

Միաժամանակ չպետք է անտեսել նաև այն իրողությունը, որ աշխարհայացքային փիլիսոփայական և քաղաքական գաղափարախոսական հայեցակարգային մոտեցումների և իրականացվող արտաքին ռազմավարության միջև առկա սերտ կապերը որոշակի ազդեցություն են թողնում այս բնագավառի հիմնահարցերի արդյունավետ լուծումներ գտնելու և՛ ընթացքի, և՛ արդյունքների վրա: Վերլուծելով ապագայի կանխատեսման հետ կապված դժվարություններն ու բարդությունները՝ Գ.Գ. Պոչեպցովը արդարացիորեն նկատում է. «Ապագան հանդիսանում է նույնպիսի իրական օբյեկտ, ինչպես ուրիշները: Կիրառական տեսակետից ուշադրությունը նրա նկատմամբ բացատրվում է հետազոտական գործիքակազմի ընդհանուր պատկերի փոփոխությամբ, որից օգտվում է ժամանակակից գիտությունը, և որի հետևանքով հնարավոր եղավ այն ուղղությունների ուսումնասիրումը, որոնք սաղմնային վիճակում էին: Ապագան՝ որպես օբյեկտ, բավարար հստակ դեռևս սահմանված չէ, սակայն նման անհստակությունը

⁴ Почепцов Г.Г. Стратегия, М., 2009, с. 132.

պայմանավորված է ոչ միայն նրա՝ որպես օբյեկտի հատկություններով, այլև նրա նկատմամբ աշխատանք կատարելու անբավարար մշակված գործիքակազմի բացակայությամբ⁵: Մյուս հանգամանքն էլ կապված է կանխատեսումների կիրառական նշանակության հետ, քանի որ միջազգային հարաբերությունների վերաբերյալ տեսական ընդհանրացումները, արժարժվող խնդիրները, ռազմաքաղաքական հայեցակարգերը բովանդակային առումով ոչ միայն համընկնում են կանխատեսումների նպատակային ուղղվածությանը, այլև ընկած են օգտագործվող մեթոդաբանության և մեթոդների հիմքում: Ուստի պատահական չէ, որ կոնկրետ հետազոտողի նպատակներն ու պատկերացումները ազդում են կանխատեսումների թե՛ բովանդակության և թե՛ արդյունքների մեկնաբանությունների վրա:

**РОЛЬ ПОЛИТИЧЕСКОГО ПРОГНОЗИРОВАНИЯ
В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ**

ОГАНИСЯН С. С.

Резюме

В настоящее время политическое прогнозирование играет важную роль в сфере внешней политики. Политическое прогнозирование во многом обусловлено страной как объектом исследования и ее материальными, экономическими, научно-техническими ресурсами, а также уровнем ее интеллектуального развития.

THE ROLE OF POLITICAL FORECAST IN FOREIGN POLICY

S. HOVHANNISYAN

Abstract

At present, political forecasts play an important role in foreign policy. Political forecasts depend on the size of the country under study, the scale of material, economic, scientific, and technological resources, as well as the stage of its development.

⁵Հարությունյան Գ.Տ., *Կանխատեսումները և ապագայի ձևավորումը, («Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 21-րդ դար, 2011թ., N 2, էջ 18-19):*